

## Հավելված 2

ՀՀ Նախագահի  
2013թ. հոկտեմբերի 21 -ի  
ՆԿ- 180 -Ն կարգադրության

### Կ Ա Ր Գ

ՄԵՎԱՆԱ ԼՃՈՒՄ ԻՇԽԱՆԻ ՊԱՇԱՐՆԵՐԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ԵՎ  
ԶԿՆԱԲՈՒԾՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՐՑԵՐՈՎ ԽՈՐՀՐԴԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ

#### I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով սահմանվում են Սևանա լճում իշխանի պաշարների վերականգնման և ձկնաբուծության զարգացման հարցերով խորհրդի (այսուհետ՝ խորհուրդ) գործունեության կազմակերպման հետ կապված հարցերը:

2. Խորհրդի գործունեության նպատակը Սևանա լճում իշխանի պաշարների վերականգնման և ձկնաբուծության զարգացման համալիր ծրագրի (այսուհետ՝ ծրագիր) միջոցառումների իրականացման աշխատանքների կոորդինացումը և դրանց նկատմամբ մշտադիտարկումների իրականացումն է:

3. Խորհուրդն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և սույն կարգով:

4. Խորհուրդը գործում է հասարակական հիմունքներով:

#### II. ԽՈՐՀՐԴԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

5. Խորհրդի հիմնական գործառույթներն են՝

1) մշակել համապատասխան առաջարկություններ Սևանա լճում ձկնաբուծության զարգացման համալիր ծրագրի հիմնախնդիրների լուծման համար.

2) իրականացնել ծրագրի կատարողական ցուցանիշների մշտադիտարկում և ծրագրի հետագա ընթացքի վերաբերյալ առաջարկություններ ներկայացնել լիազորված մարմիններին.

3) առաջարկություններ ներկայացնել ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ներդրումների ուղղությունների վերաբերյալ.

4) առաջարկություններ ներկայացնել ծրագրի շրջանակներում գնային քաղաքականության (մանրաձուկ, վաճառվող ձուկ և այլն) վերաբերյալ.

5) իրականացնել մասնագիտական հետազոտություններ և տալ եզրակացություններ.

6) իր իրավասությունների շրջանակներում կազմակերպել այլ քննարկումներ:

### III. ԽՈՐՀՐԴԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ, ՆԻՍՏԵՐԻ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

6. Խորհրդի կազմը հաստատում է Հայաստանի Հանրապետության Նախագահը:

7. Խորհուրդն իր աշխատանքներն իրականացնում է հերթական և արտահերթ նիստերի միջոցով:

8. Խորհրդի հերթական նիստերը հրավիրում է խորհրդի նախագահը՝ ըստ անհրաժեշտության, բայց ոչ պակաս, քան երեք ամիսը մեկ անգամ:

9. Խորհրդի արտահերթ նիստը հրավիրում է խորհրդի նախագահը՝

1) իր նախաձեռնությամբ.

2) խորհրդի անդամների առնվազն մեկ երրորդի առաջարկությամբ:

10. Խորհրդի նիստն իրավագոր է, եթե նիստին ներկա է խորհրդի անդամների կեսից ավելին:

11. Խորհրդի անդամները նիստերին մասնակցում են անձամբ և իրավունք չունեն իրենց լիազորությունները պատվիրակել այլ անձանց:

12. Խորհրդի նիստերը վարում է խորհրդի նախագահը կամ նրա հանձնարարությամբ՝ խորհրդի անդամներից մեկը: Խորհրդի նիստի օրակարգը և քննարկվելիք հարցերի վերաբերյալ անհրաժեշտ նյութերը խորհրդի անդամներին են հանձնվում ոչ ուշ, քան նիստից երեք օր առաջ:

13. Խորհրդի նիստերի որոշումներն ընդունվում են բաց քվեարկությամբ՝ նիստին մասնակցող անդամների ձայների պարզ մեծամասնությամբ: Ձայների հավասարության դեպքում նիստը նախագահողի ձայնը վճռորոշ է:

14. Խորհրդի հրավերով խորհրդի նիստին կարող են մասնակցել այլ անձինք:

15. Խորհրդի նիստերն արձանագրվում են խորհրդի քարտուղարի կողմից և ստորագրվում խորհրդի նիստը նախագահողի և քարտուղարի կողմից: Եթե խորհրդի անդամն ունի հատուկ կարծիք, ապա նրա ցանկությամբ գրավոր հատուկ կարծիքը կցվում է որոշմանը և գրառվում խորհրդի նիստի արձանագրության մեջ:

16. Խորհրդի նիստերը կարող են կազմակերպվել հարցումների միջոցով: Այդ դեպքում խորհրդի որոշումներն ընդունվում են նիստի օրակարգի մասին 10 օր առաջ տեղեկացված և 7 օրվա ընթացքում իրենց դիրքորոշումը ներկայացրած անդամների քվեարկությամբ:

#### IV. ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀԸ ԵՎ ԱՆԴԱՄՆԵՐԸ

17. Խորհրդի նախագահը՝

- 1) ղեկավարում է խորհրդի գործունեությունը.
  - 2) հրավիրում և վարում է խորհրդի նիստերը.
  - 3) ստորագրում է խորհրդի որոշումները և նիստերի արձանագրությունները, խորհրդի գործունեության հետ կապված մյուս փաստաթղթերն ու գրագրությունները.
  - 4) խորհրդի անդամների միջև կատարում է աշխատանքի բաշխում.
  - 5) իրականացնում է սույն կարգով իրեն վերապահված այլ լիազորություններ:
18. Խորհրդի անդամները մասնակցում են խորհրդի նիստերին և աջակցում խորհրդի գործունեության իրականացմանը:

#### V. ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐԸ

19. Խորհրդի քարտուղարը խորհրդի բնականոն գործունեության ապահովմանն աջակցելու նպատակով՝

- 1) նախապատրաստում է խորհրդի նիստի օրակարգին վերաբերող համապատասխան նյութերը և կազմակերպում դրանց տրամադրումը խորհրդի անդամներին.
- 2) ապահովում է խորհրդի որոշումների նախագծերի կազմումը.
- 3) կազմակերպում է նիստերի արձանագրումը թղթային կամ էլեկտրոնային եղանակներով.

- 4) վարում է խորհրդի աշխատանքների հետ կապված գործավարությունը.
- 5) գրանցում է խորհրդի անդամների գրավոր ներկայացրած հատուկ կարծիքները.
- 6) կազմակերպում է խորհրդի որոշումների տրամադրումը խորհրդի անդամներին, շահագրգիռ մարմիններին, խորհրդի նախագահի հանձնարարությամբ՝ այլ անձանց և կազմակերպությունների.
- 7) իրականացնում է խորհրդի գործունեության իրականացման հետ կապված տեխնիկական, կազմակերպական և ընթացիկ աշխատանքները.
- 8) խորհրդակցական ձայնի իրավունքով մասնակցում է խորհրդի նիստերին:

VI. ԽՈՐՀՐԴԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԴԱԴԱՐՈՒՄԸ

20. Խորհրդի գործունեությունը դադարում է Հայաստանի Հանրապետության Նախագահի կարգադրությամբ:

ՀՀ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ  
Ղ Ե Կ Ա Վ Ա Ր

Վ. ՍԱՐԳՍՅԱՆ